

ԷՔՍՊՐԵՍ-ԱՌԻԴԻՏ HR-Ի ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՄԱՐ



**Գործնական ստուգաթերթ 5
րոպեում 2եր թիմի
հոգեբանական իրավիճակը
ախտորոշելու համար**

Ժամանակակից բիզնեսում ընկերությունների ձախողման կամ դանդաղման գլխավոր պատճառը հաճախ ոչ թե ռազմավարությունն է, այլ ներթիմային հաղորդակցության խնդիրները:

Carnegie Institute of Technology-ի հետազոտությունը ցույց է տվել, որ մարդու աշխատանքային հաջողության **85%-ը** կախված է միջանձնային, հաղորդակցական և վարքային հմտություններից (Soft Skills), և միայն **15%-ը**՝ տեխնիկական գիտելիքներից:

Երբ թիմում չկա առողջ հաղորդակցություն, ձևավորվում են **«թաքնված ականներ»** (պասիվ ագրեսիա, այրում, լուռ դիմադրություն), որոնք ուղղակիորեն հարվածում են ընկերության ֆինանսներին և արտադրողականությանը:

💡 Այս ստուգաթերթը կօգնի Ձեզ 5 րոպեում հասկանալ՝ որտեղ է գտնվում Ձեր թիմը և ինչ քայլեր են անհրաժեշտ լիակատար առողջացման համար: Եթե ցանկանում եք թեստն անցնել քուչ, կոնֆլիկտաբան, EMBA, Effectiva հոգեբանական կենտրոնի ղեկավար Աստղինե Խաչատրյանի ուղեկցությամբ կամ միանգամից քննարկել Ձեր կազմակերպության իրավիճակը, կարող եք ամրագրել 15-րոպեանոց անվճար զանգ զրանցվելով այստեղ՝ <https://forms.gle/5fhRXxokyFLCaodo8>:

ՄՏՈՒԳԱԹԵՐԹ

🔍 Թիմային Առողջության Էքսպրես-Ստուգատես

Նշեք այն տարբերակները, որոնք նկատվում են Ձեր թիմում վերջին 1-3 ամիսների ընթացքում:

1. Հաղորդակցություն և «Ինֆորմացիոն բլոկադա»

Հեղինակ՝ Աստղիկե Խաչատրյան, «Effectiva» հոգեբանական կենտրոնի հիմնադիր, քուչ, կոնֆլիկտաբան, հոգեբան

- Ժողովների ժամանակ աշխատակիցները հիմնականում լռում են, իսկ ակտիվ քննարկումները կամ դժգոհությունները տեղի են ունենում ժողովից դուրս (կուլիսներում, սուրճի ընդմիջմանը):
- Ինֆորմացիան բաժինների միջև ուշացումով է փոխանցվում, ինչի պատճառով տուժում են աշխատանքային պրոցեսները:
- Աշխատակիցները խուսափում են ուղիղ ասել խնդիրների մասին և նախընտրում են «շրջանցել» այն գործընկերներին, ում հետ տարաձայնություններ ունեն:

2. Էմոցիոնալ ֆոն և Մոտիվացիա

- Միավորների կամ քննադատության դեպքում աշխատակիցները միանգամից անցնում են պաշտպանողական դիրքի կամ մեղադրում են այլ բաժիններին:
- Թիմում նկատվում է էներգիայի պակաս. աշխատողները կատարում են միայն իրենց պարտականությունների նվազագույն մասը (առանց նախաձեռնողականության):
- Հաճախացել են անձնական բնույթի կատակները, հեզմանքը կամ պասիվ ագրեսիան աշխատանքային չատերում/նամակագրություններում:

3. Ղեկավար-Թիմ փոխհարաբերություններ

- Ղեկավարը ստիպված է չափից շատ ժամանակ ծախսել աշխատակիցների միջև անձնական վեճերը հարթելու կամ «դատավոր» լինելու վրա:
- Թիմում կա տպավորություն, որ խնդիրների մասին բարձրաձայնելը կրերի պատժի, այլ ոչ թե լուծման (անվտանգության զգացման պակաս):

4. Կադրային հոսունություն և արդյունքներ

- Վերջին շրջանում ունեցել էք արժեքավոր կադրերի կորուստ, ովքեր հեռացել են «թիմային մթնոլորտի» կամ ղեկավարի հետ անհամաձայնության պատճառով:
- Նոր նախագծերը կամ փոփոխությունները թիմի կողմից ընդունվում են մեծ դիմադրությամբ և դժկամությամբ:



ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Հաշվեք Ձեր նշած կետերի քանակը և տեսեք համապատասխան գոտին ու լուծումը.



0 - 2 նշում → Կանաչ գոտի (Առողջ կլիմա, բայց աճի պոտենցիալով)

- Ինչ է սա նշանակում. Ձեր թիմում հաղորդակցությունը բաց է, բայց որպեսզի պահպանեք այս տեմպն ու կանխեք այրումը, թիմին պետք է տալ նոր գործիքներ:

- **Լուծումը.** Կորպորատիվ Թրեյնինգներ: Էմոցիոնալ ինտելեկտի (EQ) և սթրեսակայունության զարգացում՝ թիմի արտադրողականությունը բարձր մակարդակի վրա պահելու համար:

🟡 3 - 5 նշում → Դեղին գոտի (Թաքնված ռիսկեր, որոնք արդեն դանդաղեցնում են բիզնեսը)

- **Ինչ է սա նշանակում.** Թիմում կան «թաքնված ականներ»՝ պասիվ ագրեսիա, ինֆորմացիայի ուշացում և ժողովների ժամանակ լռություն: Ղեկավարը չափից շատ ժամանակ է ծախսում ներքին հարցեր լուծելու վրա:
- **Լուծումը Քոուչինգ:** Աշխատանք ղեկավարների հետ՝ կառավարման ոճը փոփոխելու և թիմում անվտանգության ու բաց հաղորդակցության միջավայր ստեղծելու համար:

🔴 6 և ավելի նշում → Կարմիր գոտի (Ճգնաժամային վիճակ, որը խլում է Ձեր բիզնեսի եկամուտները)

- **Ինչ է սա նշանակում.** Լարվածությունը հասել է գագաթնակետին, առկա է արժեքավոր կադրերի հեռացման ռիսկ, իսկ նոր նախագծերը հանդիպում են լուրջ դիմադրության: Սովորական թրեյնինգն այստեղ արդեն անգործ է:
- **Լուծումը. Հիբրիդային Լուծումներ (360° Մոտեցում):** Ամբողջական հակաճգնաժամային ծրագիր, որը սկսվում է թիմի խորքային Դիագնոստիկայով, շարունակվում Թրեյնինգներով և ամրապնդվում Ղեկավարների Քոուչինգով:

🌀 Ո՞րն է Ձեր հաջորդ գործնական քայլը

Թիմային կոնֆլիկտներն ու այրումը ինքնուրույն չեն անհետանում. դրանք կա՛մ խորանում են՝ բերելով ֆինանսական կորուստների, կա՛մ լուծվում են ճիշտ մեթոդով լուծվելուց:

Որպես Ձեր առաջին քայլ՝ առաջարկում եմ օգտվել իմ հատուկ առաջարկից.

📁 Ամրագրեք «Թիմային Առողջության 15-րդականոց Անվճար Ախտորոշում» Աստղիկ Սարգսյանի հետ

Սեղմեք ներքևի կոճակին, ընտրեք Ձեզ հարմար օրն ու ժամը, և առցանց հանդիպման ընթացքում մենք միասին կվերլուծենք Ձեր թեստի արդյունքներն ու կուրվագծենք Ձեր թիմին հարմարեցված լուծումը:

Գրանցվեք այստեղ՝ <https://forms.gle/5fhRXxokyFLCaodo8> **կամ** <https://wa.me/37441529505> **գրեք**